ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՈՎԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Համագործակցության մասնակից պետություններ,

համաձայն 1991 թվականի դեկտեմբերի 30-ի՝ Զինված ուժերի եւ սահմանապահ զորքերի մասին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի Համաձայնագրի,

ելնելով Համագործակցության մասնակից պետությունների պետական սահմանների եւ ծովային տնտեսական գոտիների պահպանության շահերի համար փոխընդունելի որոշումների իրականացման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով այդ սահմանների անձեռնմխելիության ապահովման ձեւավորված համակարգը եւ սկզբունքները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրում ներքոհիշյալ հասկացությունները նշանակում են.

1. "Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պետական սահմաններ"՝ Համագործակցության մասնակից անկախ պետությունների պետական սահմանների հատվածները Համագործակցության կազմի մեջ չմտնող պետությունների հետ,
2. "Սահմանապահ զորքեր"՝ Համագործակցության եւ պետությունների սեփական Սահմանապահ զորքերի կազմավորումներ,
3. "Սեփական սահմանապահ զորքեր"՝ Համագործակցության մասնակից պետությանը պատկանող սահմանապահ զորքերի կազմավորումներ,
4. "Համագործակցության սահմանապահ զորքեր"՝ սեփական սահմանապահ զորքերին չվերաբերող սահմանապահ զորքերի կազմավորումներ:

ՀՈԴՎԱԾ 2

Համագործակցության մասնակից պետությունների պետական սահմանների եւ ծովային տնտեսական գոտիների պահպանությունը իրականացնում են Համագործակցության կամ պետությունների սեփական սահմանապահ զորքերը:

ՀՈԴՎԱԾ 3

Համագործակցության մասնակից պետությունները, իրենց անվտանգության նկատառումներից ելնելով, պարտավորվում են պետական սահմանի վրա եւ ծովային տնտեսական գոտիներում գործողություններ չձեռնարկել, որոնք վնաս են հասցնում Համագործակցության մյուս մասնակից պետությունների քաղաքական, տնտեսական եւ այլ շահերին: Պետական սահմանների ռեժիմի սահմանումը եւ փոփոխումը իրականացվում է փոխադարձ պայմանավորվածությամբ, սահմանակից պետությունների հետ՝ հաշվի առնելով Համագործակցության մասնակից պետությունների շահերը:

ՀՈԴՎԱԾ 4

Համագործակցության մասնակից պետությունների պետական սահմանների եւ ծովային տնտեսական գոտիների պահպանության ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության բարձրագույն համակարգող մարմին է հանդիսանում Պետությունների ղեկավարների խորհուրդը: Պետական սահմանների եւ ծովային

տնտեսական գոտիների պահպանության ապահովման համար միջոցառումների համակարգումը
իրականացնում է Կառավարությունների ղեկավարների խորհուրդը:

Համագործակցության մասնակից պետությունների պետական սահմանների, ծովային տնտեսական գոտիների պահպանության հարցերով պետությունների ղեկավարների խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշումների իրականացումը եւ Սահմանապահ զորքերի գործունեության համակարգումը իրականացնում է Սահմանապահ զորքերի միացյալ հրամանատարությունը:

Միացյալ հրամանատարության Կանոնադրությունը հաստատում է պետությունների ղեկավարների Խորհուրդը:

Համագործակցության Սահմանապահ զորքերի ղեկավարությունը իրականացնում է պետությունների ղեկավարների Խորհրդի կողմից նշանակված Սահմանապահ զորքերի գլխավոր հրամանատարը:

ՀՈԴՎԱԾ 5

Մինչեւ Համագործակցության մասնակից պետությունների կողմից սահմանների, ծովային տնտեսական գոտիների եւ դրանց ռեժիմի մասին միջպետական համաձայնագրերի կնքումը, Սահմանապահ զորքերի կազմակերպումը եւ գործունեությունը կարգավորվում է Համագործակցության ակտերով, պետությունների ազգային օրենսդրությամբ եւ դրանց չհակասող նախկին ԽՍՀՄ նորմատիվ ակտերով:

Համագործակցության Սահմանապահ զորքերի համալրման, ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման հարցերը եւ դրանց զինծառայողների սոցիալ-իրավական կարգավիճակը կանոնակարգվում է Համագործակցության մասնակից պետությունների հատուկ համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը իր բոլոր մասնակիցների համաձայնությամբ բաց է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններ չհանդիսացող պետությունների միանալու համար:

Կատարված է Կիեւ քաղաքում 1992 թվականի մարտի 20-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 20-ից: